



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հունվարի 2020թ. թիվ 91-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի
ԹԻՎ 721-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 5)-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1)-ին կետով և 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի թիվ 737-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2020 թվականի հունվարի 24-ի թիվ 72 հրամանը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2019 թվականի դեկտեմբերի 27-ի «ՀՀ Լոռու մարզպետարանի հաստիքացուցակը հաստատելու և ՀՀ Լոռու մարզպետի 2018 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 332-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 721-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

ա) «3.2.» Բաժնի 3-րդ տողում և «3.4.» Բաժնի 2-րդ տողում «2» թիվը փոխարինել «1» թվով,

բ) «3.2.» Բաժնի «Ընդամենը» տողում «5» թիվը փոխարինել «4» թվով,

գ) «3.4.» Բաժնի «Ընդամենը» տողում «6» թիվը փոխարինել «5» թվով,

դ) «1.2.» և «1.5.» Բաժիններում համապատասխանաբար ավելացնել՝

10	Խորհրդական	1
----	------------	---

և

8	Խորհրդական	1
---	------------	---

տողերը,

ե) «1.2.» և «1.5.» Բաժինների «Ընդամենը» տողերում «9» թիվը փոխարինել «10» թվով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Invalid signature

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ